

ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ «ՏՈՒՆ» ԲԱՆԱԴՐԻՉՈՎ
ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հասկացույթը ճանաչողական լեզվաբանության առանցքային հասկացություններից է: Ըստ Պավիլենիսի՝ «Հասկացույթը հասկացության համակարգի մաս է. այսինքն՝ այն, ինչ անհատը մտածում, պատկերացնում, ենթադրում է, գիտի աշխարհի առարկաների մասին: Հասկացության համակարգն էլ արտացոլում է մարդու ճանաչողական փորձը իր ողջ հարստության և տարատեսակության մեջ»¹: Հասկացությոները կարող են արտահայտվել ինչպես բառույթներով, այնպես էլ՝ դարձվածքներով: Դարձվածքներով արտահայտված հասկացությոները չեն տարբերվում բառույթներով առկայացված հասկացությոներից, քանի որ դարձվածային միավորները միննույն ճանաչողական կառույցների միջոցով են առկայանում, ինչ-որ բառույթները: Մենք հակված ենք դարձվածքի լայն ըմբռնմանը, համաձայն որի դարձվածքների մեջ մտնում են ժողովրդի կողմից դարերի ընթացքում ստեղծված առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը, քարացած արտահայտությունները: Դարձվածքները որպես աշխարհի ցանկացած լեզվի անքակտելի մաս և մի յուրատեսակ գանձարան, կարող են առավելագույնս նպաստել որևէ լեզվամշակույթը հասկանալուն, քանի որ յուրաքանչյուր դարձվածաբանական միավորի մեջ դրված է աշխարհը լեզվի և ազգային մշակույթի պրիզմայի միջով ընկալելու յուրահատկությունը: Այս միտքը կարելի է հանդիպել նաև աշխարհի հնագույն կրոնա-փիլիսոփայական ուղղության՝ բուդդայականության հիմնադիր Բուդդայի մոտ՝ «Wir sind, was wir denken. Alles, was wir sind, entsteht mit unseren Gedanken. Mit unseren Gedanken machen wir die Welt». (Մենք այն ենք, ինչ մտածում ենք: Այն, ինչ մենք ենք, ստեղծվում է մեր մտքերի հետ: Մեր մտքերով մենք աշխարհն ենք ստեղծում)²:

Դարձվածքն իրենից ներկայացնում է անտարրլուծելի բառակապակցություն, պատկերավոր արտահայտություն կամ ժողովրդական կարճ ասույթ, որում վառ կերպով արտահայտված են ժողովրդի բնավորության էական գծերը: Առածները ևս ժողովրդի ստեղծագործ մտքի մայրուն դրսևորումներից են: Առածները և ասացվածքները խտացված ձևով արտահայտում են ժողովրդի բազմադարյա իմաստությունը, նրա դիտարկումներն

¹ Павиленис 1983, 239

² Buddha, www.gratis-spruch.de

ինչպես աշխարհի և շրջակա միջավայրի, այնպես էլ՝ միջանձնային հարաբերությունների մասին: Դրանցում արտացոլված են ժողովրդի ամբողջ ճանաչողական փորձը, նրա բարոյական-էթիկական, հասարակական-էսթետիկական, գեղարվեստական և դաստիարակչական պատկերացումները: Վերը նշված բոլոր իրողությունների հետ սերտորեն կապված է տան գաղափարը: Տունը կարող է այս համատեքստում հետաքրքիր դիտարկումների առարկա դառնալ: Յուրաքանչյուր ոք իր տունը կառուցում է ըստ այն արժեքների, որոնք ինքը կրում է: Տուն կառուցելն էլ հեշտ բան չէ, քանի որ այն պահանջում է որոշակի ունակություններ, ջանքեր և ժամանակ: Այդ միտքն է հաստատում հայերենի հետևյալ դարձվածքը՝ **Ով տուն չէ շինի, բռձիքը (սյուներ) բսնովի գիտե:**³ Տուն կառուցելիս մարդ հոգի է դնում, քանի որ տունը ոչ թե մեկ սերնդի, այլ նաև հետագա սերունդների համար է կառուցվում: Այս ամենով էլ հենց պայմանավորված են տուն հասկացության ազգամշակութային առանձնահատկությունները: **Տուն** հասկացության ընդգրկում է ոչ միայն տվյալ առարկայի ընդարձակ էական հատկանիշների շարքը, այլ նաև զգայական պատկերները, վերացական էությունները, անհատական, մտային տպավորություններն այդ առարկայի մասին: Ըստ Դուդենի գերմաներենի ունիվերսալ բառարանի **Haus** բառույթը լեզվում ներկայացված է հետևյալ իմաստներով՝ շինություն, կառույց (ein grosses Haus-մի մեծ տուն), բնակելի տարածք, բնակարան, կացարան (nach Hause gehen-տուն գնալ), ընտանիք (մարդիկ, որոնք միասին են ապրում (das ganze Haus war vollzällig versammelt- ամբողջ տունը հավաքվեց)), կենցաղ (ընտանեկան տնտեսություն (ein Haus führen-տունը վարել)), հարստություն/դինաստիա, ցեղ (das königliche Haus), հաստատություն (das Kulturhaus-մշակույթի տուն), երկիր (որտեղ ապրում են մարդիկ, որոնք միավորված են գոյության ընդհանուր պայմաններով, հետաքրքրություններով (Heimat ist unser gemeinsames Haus-հարենիքը մեր ընդհանուր տունն է))⁴:

Ա. Սուբիասյանը հայերենում տուն հասկացության համար առանձնացնում է հետևյալ իմաստները՝ բնակարան, օթևան, երդ, ծուխ, ընտանիք, գերդաստան, տուն-տեղ (ժողովրդական), ազգ, ազգատոհմ, ցեղ, երկիր, աշխարհ, բառատոդ (բանաստեղծության), հորետուն (գութանին լծված յուրաքանչյուր եզր)⁵: Համացանցային կայքերից, գերմաներենի և հայերենի լեզվաբանական կորպուսներից և դարձվածաբանական բառարաններից դուրս ենք բերել **տուն** հասկացությով այնպիսի դարձվածքներ և դարձվածաբանական միավորներ, որոնցում **տուն** հասկացությոը հանդես է գալիս

³ Առածանի, 1960, էջ 37

⁴ Duden 1989, 672

⁵ Սուբիասյան 1975, 564-565

իր հետևյալ իմաստներով՝ ա) շենք, շինություն, բ) բնակելի տարածք, գ) հարազատ օջախ, դ) հայրենիք, ե) ընտանիք գ) տնտեսություն և/կամ ունեցվածք է) հասարակական հիմնարկություն/հաստատություն: Մեր ունեցած օրինակների լեզվամշակութային վերլուծության միջոցով փորձել ենք բացահայտել ու վերհասել սզգամշակութային իմաստները: Մեր բոլոր դարձվածքները մենք փորձել ենք դասակարգել երկու խմբերի մեջ: Առաջին խմբում դիտարկվում են կայուն բառակապակցությունները, ասացվածքները և թևավոր խոսքերը, որոնցում *տունը* հատկիսանում է *բնութագրման անմիջական առարկան*: Այս խմբի դարձվածքների մեջ *տունը* որպես կենտրոնական առարկա երևում է իր տարբեր կոդմերով՝ ի հայտ բերելով մշակութային բազմաշերտություն և բազմաչափություն:

Երկրորդ խմբում ընդգրկված են այնպիսի դարձվածքներ, որոնցում *տունը* հանդես է գալիս որպես օժանդակ միջոց այլ հասկացությունների բնորոշման համար: Դրանք հիմնականում այնպիսի դարձվածքներ են, որոնցում *տունը* հանդես է գալիս *կին/տնտեսուհի, աշխատանք, խնայողություն* իմաստներով:

Առաջին խմբի դարձվածքները թույլ են տալիս բացահայտել գերմանացու և հայի ազգային գիտակցության մեջ *տուն* հասկացության հետևյալ ամենահատկանշական գծերը.

• **Տունը որպես շենք, շինություն**

Ցանկացած ժողովրդի գիտակցության մեջ կան այնպիսի հասկացություններ, որոնց առաջացման ակունքը դժվար է վերծանել: Այդպիսի հասկացություններից մեկն էլ *տուն* հասկացություն է: Աֆրիկյան Օլդուվեյ կիրճում հայտնաբերված 2000 տարվա վաղեմություն ունեցող մարդկային առաջին կացարաններից սկսած մինչև նորօրյա շքեղ առանձնատներն ու երկնաքերերը մեկ նպատակ ունեն՝ փակ և ապահով տարածքում պաշտպանել մարդուն դրսի աշխարհից: Տան հետ կապված բազմաթիվ դարձվածքներ կան նախ և առաջ Աստվածաշնչում: Անիբաժեշտ է նշել, որ Աստվածաշնչյան ինչպես գերմանական, այնպես էլ հայկական մեկնաբանությունների մեծ մասը կառուցված են դիխոտոմիայի սկզբունքով: Աստվածաշնչյան գերմանական մեկնաբանություններում *տունը* որպես շինություն, կառույց հակադրվում է տան զգայական ընկալմանը՝ սեփական անկյան զգացողությանը՝ *Stein und Mörtel bauen ein Haus, Geist und Liebe schmücken es aus.* (Քարը և շաղախը տուն են կառուցում, հոգին և սերը զարդարում են այն):

Ein Haus wird nur einmal gebaut, ein Zuhause aber täglich neu. (Տունը միայն մեկ անգամ է կառուցվում, իսկ օջախը՝ ամեն օր): Այսպիսով, տունը ոչ միայն պատերն ու տանիքն են մեր գլխի վրա, այլ նաև մի տեղ, որտեղ մարդ իրեն պաշտպանված ու հարմար է գտնում:

Տան մասին դարձվածքները հաճախ ամբողջ փիլիսոփայական հայեցակարգեր են պարունակում, դրանք շատ իմաստուն են, բայց երբեմն էլ՝ հակասական: Օրինակ, *j-m das Haus verbieten*⁶ արտահայտությունը նշանակում է դադարել ինչ-որ մեկին իր տանն ընդունել, այստեղ տունը դիտվում է որպես սեփական տարածք, ուր ամեն ոք չէ, որ թույլտվություն ունի մտնելու: Միևնույն ժամանակ *offenes Haus*⁷ արտահայտության մեջ **տունը** բնութագրվում է որպես մի այնպիսի տեղ, որտեղ հաճախ հյուրեր են ընդունվում, որտեղ կարելի է լինել՝ առանց հատուկ հրավերի: Այս նույն միտքն են արտահայտում հայերենի **իմ տունը ձերն** է թևավոր խոսքը, որ նշանակում է՝ իմացիր, որ տանս դուրը միշտ բաց է քո առաջ: **Իրեն/ինքզինքը զգալ ինչպես տանը**⁸ արտահայտությունը նս իմաստով շատ մոտ է վերը նշվածներին, քանի որ խոսողը հորդորում է դիմացիին, որ նա օտարության զգացողություն չունենա: Նույն միտքն է արտահայտում նաև գերմաներենի *sich bei jemandem wie zu Hause fühlen* արտահայտությունը: **Տանը նստել** ասելով մենք հասկանում ենք՝ գերադասել իր ազատ ժամանակը տանն անց կացնել, տուն բառը հաստատվում է որպես կենսական տարածություն, որտեղ կարելի է առանձնանալ արտաքին աշխարհից և իրեն պաշտպանված զգալ: Գերմաներենում *das Haus hüten*⁹ (տանը նստել՝ հատկապես հիվանդության պատճառով) արտահայտությունը հանդես է գալիս նման, բայց ոչ նույն բովանդակության պլանով:

• **Տունը որպես բնակելի տարածք**

Zu Hause helfen die Wände (Տան պատերն անգամ օգնում են):

Wer glücklich sein will, muss zu Hause bleiben (Երջանկ լինելու համար պետք է տանը մնալ):

Eigentlich müsste man sich fürchten, aus dem Haus zu treten. (Լավ կլիներ զգուշանալ ոտքը տան շեմից դուրս հանելիս): Վերը նշված օրինակներում տունը կարծես թե թույլ է տալիս փրկվել ճախրողություններից և անհաջողություններից, այն տալիս է պաշտպանվածության և ապահովության զգացողություն: Տունը հանդիսանում է արժեքավոր կենսական տարածք: Տան պատերից դուրս մարդ այնպես ապահով չէ, ինչպես այդ պատերի ներսում: Նման իմաստ է հանդես բերում հետևյալ թևավոր խոսքը՝ *Vier eigene Wände machen einen Menschen frei* (Չորս սեփական պատեր մարդուն ազատ են դարձնում): *Տուն* հասկացույթը ներկայացնող դարձվածաբանական միջոցների շարքին կարելի է դասել նաև այնպիսի

⁶ Duden 1996, 672

⁷ Duden 1996, 672

⁸ Բեդիրյան Պ. 2011, էջ 1276

⁹ Langenscheidts Grosswörterbuch, 1997, Seite 448

կայուն բառակապակցություններ, ինչպես *unter einem Dach wohnen* (մի տանիքի տակ ապրել) կամ *in seinen vier Wänden wohnen* (իր չորս պատի մեջ ապրել), ինչը նշանակում է՝ չշփվել մարդկանց հետ, տանից դուրս չգալ:

Հայերենում տունը սատանա, դուրսը քահանա¹⁰ (երկերեսանի, կեղծավոր, շողորորթ մարդ) և տանը հավերք կու ջարդե¹¹ արտահայտություններն արտահայտում են օտարին բան չանել, բայց ընտանիքին նեղացնել իմաստը: Գերմաներենի դարձվածքներում այս իմաստը չի հանդիպում:

• **Տունը որպես հարազատ ընտանեկան օջախ**

Գերմանական մշակույթում տան ջերմությունը, վառվող վառարանի և տաք անկողնու առկայությունը կնոջ հետ էր նույնացվում՝ ի տարբերություն ոչ հարմարավետ և սառը արտաքին աշխարհի, որի մեջ զլխավոր դերը տղամարդունն էր: Այդ մասին է վկայում գերմաներենի հետևյալ հայտնի դարձվածքը՝ *Das Heim ist die Welt der Frau, die Welt ist das Heim des Mannes*, որը թարգմանաբար նշանակում է՝ տունը կնոջ աշխարհն է, իսկ աշխարհը՝ տղամարդու տունն է: Հայերենում օջախը որպես կրակի աղբյուր համարժեք է տուն հասկացության և ձեռք է բերել հոմանիշության իմաստ: Այն գերմանացիների պատկերացման մեջ նա կա, սակայն բառային դրսևորում չունի:

Տուն հասկացության այնպիսի հատկանիշներ, ինչպես, ներդաշնակություն, համերաշխություն և համաձայնություն ընտանիքում, ևս բնորոշ են գերմանական մշակույթին, ինչն էլ իր արտահայտությունն է գտել ժողովրդական իմաստության մեջ՝ *Eintracht baut das Haus, Zwietracht reißt es nieder* (Համերաշխությունը տուն է կառուցում, անհամերաշխությունը քանդում է այն): Նույն միտքն է արտահայտում նաև՝ *Bei Unverträglichkeit gedeiht kein Feuer im Haus, der eine bläst es an, der andere bläst es aus* (Իրար հետ յուր չգնալու դեպքում տան կրակը չի վառվում, մեկը փչելով վառում է այն, մյուսը՝ փչելով հանգցնում): Եվ երջանկությունը միշտ սեփական տան պատերի ներսում պետք է փնտրել՝ *Es ist eine Hauptsache, das zu Hause zu haben, was man ausser dem Haus selten findet: Freude* (Գալևոր է՝ տանն ունենալ այն, ինչ դրսում հազվադեպ են գտնում՝ ուրախություն): Դրան հասնելու համար էլ, իհարկե, սերն է կարևոր՝ *Die Liebe macht zum Goldpalast die Hütte*. (Մերը խղճուկ խրճիթն անգամ պալատ կդարձնի):

Եվ կարևոր է, որ այդ համերաշխության և ներդաշնակության մեջ առանցքային է կնոջ դերը, որի մասին ևս բազմաթիվ/թևավոր խոսքեր ու ասացվածքներ կան, ինչպես՝ *Ein Haus ohne Herrin ist ein Leib ohne Seele*,

¹⁰ Սուբիասյան Ա. Մ. 1975, էջ 664

¹¹ Բեդիրյան Պ. 2011, էջ 1278

der bald zufällt (Առանց տանտիրուհու տունն անհոգի մարմին է, որը շուտով կտապալվի): Հայերենում հո անկնիկ տունը, հո ջրոտած ջաղացը և տուն թող կնիկ էլնի, թող գեշ էլնի դարձվածքները նույն իմաստն են արտահայտում: Հայերենում տան տղամարդը իր տան մշակն է դարձվածքն ընդգծում է տղամարդու անփոխարինելի դերը տան մեջ՝ ընտանիքի ապրուստը հոգալու հարցում: Տան հյուրընկալության և հյուրերի նկատմամբ սրտաբաց լինելու մասին է վկայում Յոհանն Վոլֆգանգ Գյոթեի թեմավոր խոսքը՝ *Und wenn die Herzen weit sind, da ist auch das Haus nicht zu eng*¹² (Եթե սրտերը լայն են, տունն էլ շատ նեղ չէ): Նույն իմաստն ունեն նաև հայերենի էն տունը քանդվի, որ դռնաղ չի գա, էն դռնաղն էլ մեռնի, որ իրիկունը չի գա, առավոտն էրա կամ դռնաղը տան տիրոջ վարդն ա ասացվածքները: Հետաքրքիր են երկու լեզվամշակույթներում առկա *der Sohn des Hauses* (տան տղա) կամ *die Tochter des Hauses* (տան աղջիկ) արտահայտությունները, որոնք խոսում են մտերմության և վստահության, դիմացինին ընտանիքի անդամի պես ընդունելու մասին:

Հայերենում **տունը մերը, խոսքը մերը** թեմավոր խոսքը դիմացինին հորդորում է, որ նա խոսողին մտերիմ և հարազատ մարդ է և իրենց խոսքն էլ իրենց երկուսի մեջ և այդ տան պատերի մեջ պետք է մնա: Եթե գերմաներենում մենք տունը դիտարկեցինք որպես շինություն, բնակելի տարածք և հարազատ օջախ, ապա հայերենում տունը հանդես է բերում հավելյալ իմաստ՝ դա գաղտնիության իմաստն է: Հետաքրքիր է նաև հայերենի մի տան պես լինել թեմավոր խոսքը, որ նշանակում է ընտանիքներով շատ մտերիմ լինել, մտերմիկ ու համերաշխ հարաբերություններ ունենալ: *Տուն* բառույթի այս իմաստը նա բացակայում է գերմաներենի դարձվածքներում:

Գերմաներենի դարձվածքներում բացակայում է նաև *հարգանք մեծի հանդեպ իմաստը*, որ հայերենում արտահայտված է բազում օրինակներով, ինչպես՝ *Թե տունը մեծ ունի, մեծին պաշտե, թե մեծըմ չունի, մեծ քար մը դիր, անոր մեծի տեղ պաշտե*: Տանը որ մի մենծ չըլնի, տեղը քոթուկ կը դնեն¹³:

Հետաքրքիր լրացուցիչ իմաստ ունի *das ganze Haus auf den Kopf stellen*¹⁴ (տունը գլխի վրա շրջել/շուռ տալ) արտահայտությունը: Հատակը ներքին պատն է, որնե անոթի հիմքն է և, իսկապես, ըստ հին հավատալիքների տունը նման է համաշխարհային գավաթի, որն «իր մեջ է՝ հավաքում տիեզերքի ողջ աստվածային էներգիան, մարմնավորում երկրային ներդաշ-

¹² www.gratis-spruch.de, Johann Wolfgang Goethe

¹³ Առածակի, 1960, էջ 276

¹⁴ Duden 1996, 672

նակությունն ու կարգ ու կանոնը»¹⁵: Շրջել նշանակում է քառասյին, անկարգ վիճակ ստեղծել: Այստեղ *տունը* նույնացվում է աշխարհի հետ:

Գերմաներենի դարձվածաբանության մեջ *տունն* անգամ նույնացվում է մարդու հետ: Գերմաներենում *das Haus* բառույթը առօրյա խոսակցության մեջ օգտագործվում է մարդկանց բնութագրելու համար և կրում է հումորային բնույթ. *ein altes Haus*- ավագ ընկեր, հին ընկեր, *ein bemoostes Haus*-հավերժ ուսանող, *ein fides Haus*-ուրախ տղա, *ein gelehrtes Haus*-գիտնական գլուխ, *ein kluges Haus*-խելոք, խելացի, *ein patentes Haus*¹⁶ –գործնական մարդ: Կարելի է զուգահեռ անց կացնել տան մասերի և մարդու մարմնի մասերի միջև: Օրինակ, գլուխը՝ մարդու մարմնի վերին մասը, նույնացվում է տան տանիքի հետ: Գերմաներենի *Er ist nicht ganz richtig unterm Dach, im Oberstübchen* արտահայտությունը կարելի է թարգմանել խելքը տեղը չէ, դա, իհարկե, *տուն* հասկացության առաջին հայացքից թաքնված ճանաչողական հատկանիշ է (հոգեկան առողջություն, հոգեկան հավասարակշռություն): Նման արտահայտություն կա նաև հայերենում, ինչպես օրինակ, *տունը* մարդ (չ)կա, նշանակում է՝ խելքդ գլուխդ է: *San* և մարդու համեմատության օրինակ է նաև հայերենի մարդ *ասածդ երկու պատուհան ունեցող մի տուն* է¹⁷ թևավոր խոսքը: Սակայն տան և մարդու համեմատությունն ավելի բնորոշ է գերմանական լեզվամշակույթին: Դրան հակառակ հայերենում բազմաթիվ հորդորներ ու անեծքներ կան տուն բառույթով, ինչը բնորոշ չէ գերմաներենին: Օրինակ, *տունդ ավերվի, տունդ ծակվի, տունդ քանդվի, տունդ բանջարկուտ դառնա, տան վրա մոխիր բերել, տան վրա հող մաղել*՝ անեծքներ են, իսկ *տունդ Աստված շինի կամ քո տունը չքանդվի* թևավոր խոսքերը խոսողի դժգոհությունն են արտահայտում, *քո տունը շինվի*՝ հորդոր է արտահայտում: Տուն հասկացության այնպիսի ճանաչողական հատկանիշ, ինչպես ընտանեկանությունն է, գերմաներենում արտահայտվում է *Heim* բառույթի միջոցով, ինչի մասին վկայում են որոշ բառարանային օրինակներ: *Heim* բառի հիմնական իմաստի մասին է վկայում *ein Heim gründen*¹⁸ (իր ընտանիքը հիմնել, ընտանիքի, տան տեր դառնալ) արտահայտությունը:

• Տունը որպես հայրենիք, հետևաբար նաև տեղ, ուր մարդ իրեն ազատ և անկաշկանդ է գտնում

¹⁵ Маковский, 2004 : 210-211

¹⁶ Wahrig 1997. Seite 608

¹⁷ Առավուտ, 2004, 12.17/Արևակ

¹⁸ Duden 1996, 672

Աստվածաշնչյան մեկնաբանություններում *տունը* որպես կանոն հակադրվում է օտարությանը: «Իսկական *տունը* միշտ հայրենիքն է, ինչը բունն է, այլ ոչ թե՝ ուրիշինը: Այն, ինչ բունն է, հասկանալի է, մոտիկ, հարազատ ու մոտեմիկ»¹⁹: *Ost und West, daheim das Best* (Արևելք գնաս, թե՛ արևմուտք, տանը սակայն ամենից լավն է): Անգամ եթե *տունն* աղքատ է, ոչ շատ հարմարավետ, միևնույնն է՝ մարդը *տանն* իրեն ավելի լավ է գգում, քանի որ *տանը* նա բնական է, անկեղծ և անկաշկանդ: *Das Zuhause ist keineswegs der einzige zivilisierte Ort in einer abenteuerlichen Welt, sondern der einzige unzivilisierte in einer Welt der Zwänge und Pflichten.* (Այս արկածային աշխարհում տունը/օջախը ոչ մի դեպքում ամենաքաղաքակրթված տեղը չէ, այլ հարկադրանքներով լի աշխարհի միակ ոչ քաղաքակիրթ վայրը): Սակայն հենց այստեղ և միայն այստեղ է մարդն իրեն լրիվ անկաշկանդ գգում:

- Տունը որպես ընտանիք՝ մարդիկ, որ միասին, մի հարկի տակ են ապրում

Թե՛ գերմաներենում, թե՛ հայերենում *տունը* նշանակում է ոչ միայն շինություն, ապրելու տեղ, կացարան, այլ նաև՝ ընտանիք: Գերմաներենում *տուն* հասկացության այս իմաստային բաղադրիչը ևս իր արտահայտությունն է գտել Աստվածաշնչյան մեկնաբանություններում: Այստեղ *տունը* բնութագրվում է այնպիսի իմաստային հատկանիշերով, ինչպես միաբնություն և համերաշխություն՝ *Aus einem Haus, in dem viel gestritten wird, ziehen eines Tages selbst die Hühner aus* (Տանից, որտեղ շատ են վիճում, մի օր անգամ հավերը կփախչեն): Նման միտք է արծարծվում նաև Աստվածաշնչյան հետևյալ թևավոր խոսքում՝ *Durch Weisheit wird ein Haus gebaut und durch Verstand erhalten*²⁰ (Բմաստնությամբ տուն են կառուցում, խելքով պահում են այն): Հայերենում շատ հայտնի են այնպիսի թևավոր խոսքեր, ինչպես՝ *տունը քանդել/քանդվել, տունը կործանել/կործանվել, տունը ավիրիլ/ավերվել*, որոնք նշանակում են կործանել, կործանում բերել: Եվ դրանց հակառակ արտահայտություններ, ինչպես օրինակ, *տուն դնել՝ տնավորվել, ընտանիք կազմել, տուն սարքել, տունը շինել՝ բարություն անել, բարեկեցության հասցնել, տուն ու տեղ դնել՝ ընտանիք կազմել, տուն-տեղ անել՝ ամուսնացնել*: Տուն քանդելն ու ժամ քանդելը մեկ ա սուտյոթը հայերենում խորհրդանշում է *տան՝ ընտանիքի*, սուրբ լինելը, ինչպես մենք եկեղեցին ենք սուրբ համարում:

¹⁹ Гехт:ар, 2009 : 107

²⁰ www.gratis-spruch.de

Ինչպես վերը նշվեց, երկրորդ խմբի մեջ *տունը* դիտարկվում է որպես մի միջոց այնպիսի հասկացությունների բնութագրման համար, ինչպես, օրինակ, *կին տնտեսուհի, աշխատանք, խնայողություն*:

• Տունը որպես տնտեսություն, ունեցվածք

Տնային տնտեսություն վարելը մի տեսակ արվեստ է, որը շատ ժամանակ է ուժ է պահանջում: Մեզանում ընդունված *տանտիկինի* մի ձեռք գող պիտի ըլնի (կինը պետք է խնայող լինի) ասացվածքը ցույց է տալիս, թե որքան մեծ է կնոջ դերը տնտեսությունը վարելու հարցում: Խնայողություն իմաստի ճիշտ հակառակ հասկանիչի՝ ցոփության ու շվայտ կյանքի մասին են խոսում *տունը* չկա պուլգուր ապուր, ինքը պտըտիկը ապըր-գուպուր և *տունը* չկա թան ու փոշի, գլուխը կապեր ա կարմիր փուշի²¹ դարձվածքները: Գերմանական մշակույթում տնային տնտեսությունը վարելը նշանակում է նախ և առաջ հաշվենկատություն, տնտեսելու ունակություն, խնայողություն՝ *Kleine Küche macht das Haus gross* (փոքր խոհանոցը մեծացնում է տունը) այսինքն՝ գուսպ կենցաղը կարող է նպաստել տան բարգավաճմանը կամ՝ *Sparsamkeit erhält das Haus* (խնայողությունը տունը կպահի): Խնայողության իմաստն է արտահայտում նաև *Die Frau kann mit der Schürze mehr aus dem Hause tragen, als der Mann mit dem Erntewagen einfährt* (կինը կարող է իր զոզկոցով ավելին տնից հանել, քան ամուսինն է ներս բերում բերքի ավտոմեքենայով) արտահայտությունը: Կինը միշտ համարվել է ընտանեկան օջախի կրակը վառ պահողը, տնտեսուհի, որը տան մեջ ստեղծում է սիրո, համերաշխության և խաղաղության մթնոլորտ և այդ մասին է վկայում գերմաներենում *Ist eine liebe Frau im Haus, dann lacht das Glück zum Fenster hinaus* (Եթե լավն է տան կինը, ապա լուսամուտից երջանկությունն է ծպտում) դարձվածքը:

• Տունը որպես հաստատություն և հասարակական հիմնարկություն

Այս իմաստը երկու լեզուներում էլ հիմնականում բարդ բառերում է հանդիպում: Օրինակ, գերմաներենում *Krankenhaus, Clubhaus, Opernhaus, Cafehaus, Irrenhaus/Narrenhaus* և այլն: *Irrenhaus/Narrenhaus* բարդ բառերն ունեն նաև *Nervenlinik* հոմանիշ ձևը, որը թույլ է տալիս ազատվել բացասական զուգորդումներից: Հայերենում հանդիպում են *դրամատուն, զրավատուն, դեղատուն, փոստատուն, հեռագրատուն, մաքսատուն, խաղատուն, խմբագրատուն* և այլն: Հաճախ նույն իրակությունն առկա է երկու լեզուներում էլ, սակայն տարբեր են արտահայտման միջոցները: Օրինակ, գերմաներենի *Krankenhaus* բարդ բառը հայերենում *տուն* բաղադրիչով չի

²¹ Առաձանկ. 1960, էջ 20

կազմվում, այլ –անոց գոյականակերտ վերջածանցով, ինչպես՝ *հիվանդանոց*։ Գերմաներենի *Gotteshaus* բարդ բառը հայերեն թարգմանվում է որպես հարադիր բարություն՝ *Աստծո տուն*։ Հայերենում *հասարակաց տուն* հասկացությունը օբյեկտորն է (*տունը* փակ տեղ է՝ օժտված որոշակի եզրթերիզով, որը մեր գիտակցության մեջ զուգորդվում է մասնավորի, անձնականի հետ, որին հակադրվում է հասարակականը։ Հասարակության մեջ ընդունված նորմերով խիստ անձնականը հասարակականի հետ համադրելի չէ, միևնույն *հասարակական/հասարակաց տունը* սրանք հմադրում է)։ Այս իրավության համար գերմաներենը ի տարբերություն հայերենի փոխառել է *das Bordell* բառը, որը զգայական առումով ավելի չեզոք է, քան հայերենը։

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ.

- Երկու լեզուներում էլ *տուն* հասկացությոը հանդես է բերում *շենք, շինություն, բնակելի տարածք, հարազատ օջախ, հայրենիք, ընտանիք, տնտեսություն և/կամ ունեցվածք, հասարակական հիմնարկություն/հաստատություն* իմաստները, ինչն էլ վկայում է այս հասկացությի համամարդկային մշակութային արժեք լինելու մասին։ Երկու լեզվամշակույթներում էլ *տուն* հասկացությին բնորոշ են սեփական տարածքի զգացողություն, պաշտպանվածություն և ապահովություն, հյուրնկալություն և սրտաբացություն, ներդաշնակություն և համերաշխություն, մտերմություն և վստահելիություն, խնայողություն և տնտեսվարություն իմաստները։

- Գերմաներենում հանդիպում են բազմաթիվ արտահայտություններ, որոնցում *տունը* նույնացվում է մարդու հետ, ինչը բնորոշ չէ հայերենին։

- Հայերենի դարձվածքներում *տունը* ներկայանում է հորդոր, անեծք ու օրհնանք իմաստներով, ինչը բնորոշ չէ գերմաներենին։ Գերմաներենում չենք գտել նաև դարձվածքներ, որոնք ունենան *հարգանք մեծի հանդեպ, գաղտնիություն, ընտանիքների մտերմություն* իմաստները։

Գրականություն

1. Բեդիրյան Պետրոս Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., 2011. 1273-1278
2. Ղանալանյան Ա. Տ. Առածանի, ՀՍՍՀ ԳԱ Ակադեմիայի հրատ., Երևան, 1960
3. Սուքիասյան Ա. Մ. Գալստյան Ս. Ա. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975, 564-565
4. Duden. Redewendungen. Wörterbuch der deutschen Idiomatik 3. überarbeitete und aktualisierte Auflage. B.11 / Dudenverlag. Mannheim. Zurich., 2008. Seite 341

5. Duden Deutsches Universalwörterbuch 3., neu bearbeitete Auflage Mannheim. Leipzig. Wien. Zurich. 1996, seite 672
6. Wahrig Deutsches Wörterbuch, Bertelsmann Lexikon Verlag, Gütersloh, 1997, Seite 608
7. Большой, немецко-русский словарь: В 3 т. / Авт. сост. Е. И. Лепинг, Н. П. Страхова, Н. И. Филичева и др.; под общ. рук. О. И. Москальской. — 7 изд. стереотип. Москва, 2001. стр. 281
8. Langenscheidts Grosswörterbuch, Dieter Gotz, Günther Haensch, Hans Wellmann Berlin. München. Wien. Zurich. New York, 1997, Seite 448
9. Гехтляр С. Я., «Русское слово в контексте духовной» культуры / С. Я. Гехтляр. Брянск : Курсив, 2009, стр. 336
10. Павиленис Р. И. Проблема смысла. Современный логико-философский анализ, Москва, 1983, 239
11. Маковский М. М. Этимологический словарь современного немецкого языка/М.М.Маковский.- М.Азбуковник, 2004. 210-211

The concept *home* has been studied in the idiomatic level of German and Armenian languages in the following article. *Home* is present as follows: a) building, b) residential property, c) hometown, d) motherland, e) family, f) fortune, g) social organization.

The examples have been chosen from idiomatic dictionaries, German and Armenian linguistic corpuses and electronic sites.

The usage of the concept in the idioms is related to the linguistic, psychological and cultural peculiarities of the native speakers of the following language, and the study allows to complete the very important linguacultural reflection of *home* concept in the idiomatic level of the two languages.